և 'ի հարաւոյ գաւառին Էրտէպիլայ. քաղաքն ՄԻԱՆԷ մերձ է 'ի խառնուրդս Ղահի-Բուտայ և Քարանկուի 'ի Գրզըլէօզէյն, և կոչի Մէյանէ նշանակելով միջասահման գոլ ընդ Ասորստանական և ընդ Իրադ. փոքր է և սակաւաբնակ, իբր 700 տամբք. այլ գեղեցիկ և բարեբոյս շրջակայիւք. և Ճանապարհք 'ի ջորից ծագաց նորին տանին 'ի գլխաւոր նահանգս արևմտեան Պարսից: Ի հարաւոյ նորուն ընդ մէջ Գրզըլէօզէյնայ (որ Թուի Գուվան գետ յիշատակեալ 'ի Ս. Գիրս) և Ասորստանայ օժանդակի նորին՝ յահեկէն, ձգին Քօփրան կամ Քաֆլան-Քուհ լերինք անջրպետք կրկին նահանգացն. և յանցս գետոյն որ տանի 'ի նոսին՝ արկեալ է գեղեցիկ և մեծ կամուրջ ալիւսեայ 23 կամարօք: — Յարևմտից Միանէի առ Ղահի-Բուտաւ ձգի վիճակն ԻՒՃԵԱՆ. յորում 'ի վերայ արքունի ճանապարհին Դավիժոս և Միանէի՝ կայ ամուր աւանն ԹԻՒՐՔՄԻՆ-ՁԱՑ, ուր յամին 1827 կնքեցան դաշինք հաշտութեան ընդ Պարս և Ռուսս. սոքա յեսինքս հասին յայնժամ 'ի շահէն զՎրաստան և զԱղուանս և զՀայս մինչև ցերասխ գետ: — Ի հիւսիսոյ Միանէի կայ ԿԷՐՄԻԱՆ վիճակ ցՊո�Վի-ը լեառն 'ի հիւսիսոյ, և ԽԷԼԽԷԼ կամ Խալխալ վիճակ յարևելից ցԿիլան նահանգ:

116. Ի մոկց Կիլանայ, 'ի հիւսիսոյ Միանէի, յելից Սիւրխապայ և աղի գաշտին, և 'ի հարաւոյ Գարա-լայ կամ Տէրէաի-Բուտ գետոյ (որ Թաւրի յԵրասխ), և յարևմտից հարաւոյ Մուղան անապատի՝ կայ գաւառն ԷՐՏԷՊԻԼ կամ ԱՐՏԱԲԻԼ, յորում ամբառնայ բարձրագոյնն լերանց Ասորստանական, անուանին Սեվլան կամ Սավլան որ է Սաաալան 12200', յորոյ գագաթան են մնացուածք քարանց շինուածոց և արձանագիր ևս եղծեալ, և պատուի անդ 'ի մահմետականաց գերեզման սրբազանի ուրուսն, և անդ ասեն զեռալ զմի յականց եղեմնարուս գետոց. զի և յամենայն կողմանց լերինն բղխեն վտակք անթիւք, որք աղբիւրացուցանեն զգլխաւոր գետս արևելեան Ասորստանական. յարևմտից կողմանէ ոսաք լերանցն աղխաղխեալք ձգին ցսահմանս Վասպուրական Հայոց: Քաղաքն ԱՐՏԱԲԻԼ յարևելից կուսէ լերինն կայ և յարևմտից Պաղրաաաքհ լերանց Կիլանայ, իբր 34 մղոնաւ մերձ 'ի ծովն Կասպից, 'ի բարձու 4235', առ Պուլբուլը-սու գետով որ խառնի 'ի Գարա-ջայ. պարըսպապատ է և աշտարակաշարդ, հնագոյն շինից աւերակաք կարկատեալ. անուանի է վան դերեզմանաց Սէֆիեան արքունի տոհմին, զի Շէյխ Սէֆի նահապետ նոցին ասա մեռաւ յամին 1334. շիրմ նորա և Շահ Իսմայէլի առաջնոյ Թագաւորի տոհմին և այլոց համազարմից, կան 'ի հոյակապ արծաթագուռն և Ճոխազարդ մզկիթի, այլ ոչ սակաւ խանդարեալ է վայելչութիւն նոցա 'ի սասանութենէ երկրի, և մատենադարան աղօթանոցին յաւարի առեալ 'ի Ռուսաց: Ճանապարհք կարաւանաց ձգին յԱրտաւիլայ ընդ բազում կողմանս, յորոց մին տանի 'ի հիւսիս 'ի Պաքու և 'ի Տէրպէնտ: Բնակիչք իբրու 4000 ևեթ, քանզի ոչ է յոյժ հաճելի կլիմայն, վասն երկար ձմրայնոյն, որով և բուսաբերութիւն սահմանացն նըւազեալ է: Գտանին 'ի մերձաւոր վայրսն աղբերք հանքային ջերմ և ցուրտ ջրոց:

117. Ի հիւսիսի Սէվլանայ կայ ՄԻՐԳԻՆ վիճակ ցԳարա-սու. և յայն կողմն սորա, այսինքն 'ի հիւսիսի՝ ԱՐՇԱՒ-ԱՆԼԻՒ վիճակ, 'ի մոկց Կիլանայ. 'ի հիւսիսոյ նորա ՈՒՃԱՐՈՒՏ. անտի և 'ի վերս ցերասխ գետ և ընդ արևմուտս ցբուն Գարա-սու կամ Տէրեաի-Բուտ, երկիրն մասն է ՄՈՂԱՆ անապատի կամ մեծի երիզուտ գաշտի, որ մասամբ բնակեալ է 'ի Թիւրքմէնից, և մասամբ անբնակ, և ձմերային արօտք անթիւ հօտից վրանաբնակաց: Արևելեան և հիւսիսային կէս Մուղանայ առ Կասպիականաւն՝ Ռուսաց բաժին է: — Յարևմտից Միջքինայ և 'ի ստորին հարաւային մասին Տէրեաի-Բուտայ կայ ԱՀԱՐ կամ ԷՀԷՐ վիճակ, տարածեալ առ համանուն գետով, որ 'ի կողմանց Մարանդայ գայ յարևմտից և օժանդակէ զԳարասու. յայմ կամ 'ի հիւսիսոյ նորին կայ քաղաքն ԱՀԱՐ, որ ոչ միայն վիճակին գլխաւոր քաղաք է, այլ և համարէն ԳԱՐԱՏԱՂ գաւառի, որ կայ յելից Մարանդ գաւառի, 'ի հարաւոյ Երասխայ և Գարասուայ, և 'ի մոկց Տէրեաի-Բուտայ. փոքր է և սակաւաբնակ իբր 700 տամբք: Շուրջանակի պարտէզս ունի սեխենեաց, և ոչ հեռի 'ի լերինն՝ երկաթահատս: Մերձագոյն Երասխ գետոյ վիճակք են ՔԻՎԱՆ և ԷՆԿՈՒՉԷՖԻ, և ոչ սակաւ ամուր վայրք 'ի նոսա:



Խաչարձան յԱնի. — Croix funéraire (Ani).